№ 278 ՈՒՐԲԱԹ, 14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 278

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Ձեռագրերը չեն գրվում և խմբագրատանը։
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆոն № 2—53։

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ։
Տպարանի տէլէֆոն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ **1913** Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը 2 ր.։ Դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը 85 կոպ.։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 դրուշ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուագ կամ մասամաս վճարած կունենան **10** ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան **ԶՐՈՒԱԲԱՐ** հետեւեալ 2 գրքերը.

1) „Մշակ" եւ հայ կինը", որի մէջ ամփոփված են 1872 թուականից մինչև 1891 թ. «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները եւ բանասիրականները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջխաղացման գործին մասնաւորապէս։ Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր զարդիր պատկերով եւ մօգայիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով։

2) „Մշակի" քառասնամեակ" Լ. Դանիէլեանի կազմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրա։ Գրքի մէջ ամփոփված են՝ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Բաքիքիի, Գ. Սունդուկեանի, Ա. Ալփիարեանի, Յ. Տէր Մարկոսեանի, Ալ. Քալանթարի եւ Հ. Առաքելեանի պատկերները։

«Մշակի» ոչ-բաժանորդների համար առաջին գիրքն արժէ 1 ռուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կոպ։ Ճանապարհածախքը՝ 15—20 կոպ. գնողի վրա։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Գրիգոր Արէվեան և Անանա Բէզարեան Մարտիրոսեանցները սրտի խորին կսկիծով յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջինն իր անմոռանալի և թանգագին հօր, իսկ երկրորդը իր սկեսրայրի՝

Արտեմ Եանօքեան ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

մահը։ Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, շաբաթ, դեկտեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 10½-ին հանգուցեալի բնակարանից (Սինօդալնայա փող. № 2) դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Աստիվանքի գերեզմանատանը։

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԱՇՍՕՐ, ուրբաթ, դեկտեմբերի 14-ին

ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ կը տրվի

1) **ԼԱԿՄԷ** օպէրան, երաժշտ. Դէլիբի, 3 գործ.

2) **Բալէտային նոր դիվերտիսմէնտ՝** մասնակ. Կայս. Թատր. Նախկին պրիմաբալերինա Օֆիցէրովայի։

Տոմսակները վաճառվում են Թատրոնի կասայում։

(առ.) 938. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

նշանակված է կիրակի, դեկտեմբերի 16-ին, առաւօտեան ժամը 11-ին, Ընկերութեան դահլիճում (Աբա-Աբաղեան հրապարակ, № 7, սեփ. տուն)։

Զեկուցումների առարկաներն են.
1) Ուսուցչական ֆօնդի հրահանգի քննութիւնը և հաստատումը։
2) Կենտրոնի և ճիւղերի 1913 թ. նախահաշիւների քննութիւնը և հաստատումը։
3) Ընթացիկ հարցեր։

(Կ.) առ. 937. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների Խորհուրդը խնդրում է պ. պ. անդամներին և թեկնածուներին շտապել վերանորոգել իրանց տոմսակները 1913 թ. համար։ Վերանորոգման վերջնական ժամանակամիջոց նշանակված է դեկտեմբերի 14-ը։ Ժամանակին չը վերանորոգողներ տուգանք են վճարում 8 ռուբլի (§ 15 Ժող. Կան.)։ Գրասենեակը բաց է սոնեն օր երեկ. ժամը 8—10 ը։ (1, 6, 11, 14) առ. 878. 5—5

ԾԽԱԽՈՏ 15 հատը 6 կոպէկ։ Ծխախոտագործարան „ՄԻՐ" (Կ. Ջ. ու.)

Փորձեցէք ծխել „ԱՆԻ"



Պահանջեցէք անկայման ԱՄԵՆ ՏԵՂ։

ԾԽԱԽՈՏ 25 հատը 10 կոպէկ։ Ծխախոտագործարան „ՄԻՐ"

առ. 936. 50—1

Գրական-Գեղագիտական Սալոն

Այսօր, ուրբաթ, Գրական-Գեղագիտական Սալոնի հերթական jour fixe ը նուիրված է Գրիգոր Արծրունուն, մահվան 20-ամեակի առիթով։ Այսու հրաւիրվում են Սալոնի մշտական հիւրերը և Արծրունու յիշատակը յարգող հաստատութիւնների՝ դպրոցների, կուլտուրական, բարեգործական ընկ. ներկայացուցիչները։ Սկսվում է երեկոյեան ժամը 8 ին։ Ըստ սովորութեան ոչ ոքի առանձին հրաւէր չէ ուղարկվում։

Այսօր երեկոյեան լոյս է տեսնում և «Տարագի» դեկտ. № ը նուիրված Արծրունուն և Արախանեանին։

Լոյս է տեսել այսօր «Ազդիւր-Տարազի» հրատարակութեամբ «Գրիգոր Արծրունի», մահվան 20 ամեակի առիթով, թուցիկ կենսագրութիւնը՝ կեանքի և մահվան նշանաւոր օրերի նկարագրութիւնով, պատկերազարդված և տպված ընտիր թղթի վրա։ Գինը 30 կոպէկ։

առ. 26. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
«Ազդիւր-Տարազի» հրատարակութեամբ

ԳՐ. ԱՐԾՐՈՒՆԻ

(Մահվան 20-ամեակի առիթով)

Թուցիկ կենսագրութիւնը, կեանքի և մահվան նշանաւոր օրերի նկարագրութիւնով, պճնազարդված նրա բազմաթիւ պատկերներով։

ԳԻՆԸ **30** Կ.

25 հատը 7 ր., 100 ը 25 ր.

Վերադիր վճարով պատուէրներ չեն կատարվում։

Դիմել՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ. Головинскій пр. 41.

(Կ.Չ.ու.) առ. 26. 4—1

Ամսիս 19-ին

«ՔՐԻՍՏՈՍԻ ՓՈԽԱՆՈՐԴԸ»

ներկայացման երկու քառաձայն հիմն երգելու համար վարձատրութեամբ և շուտափոյթ

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ **ԵՐԳԻՉՆԵՐ**

(տենորներ և բասեր)։

Զայները փորձելու և պայմանների համար դիմել երաժշտագէտ Արշակ Տէր-Յովսէփեանին Окоевская ул. № 4 (Армянск. базаръ) ժամը 4—5. մինչև ամսիս 15 ը։

(ա. օ.) 935. 2—2

Լոյս տեսաւ
Բժշ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻ
6-րդ տպագրված աշխատութիւնը

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՈԶ

ԵՒ ՆՐԱ ԴԷՄ ԿՌԻԵԼՈՒ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ։

Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ։ Գինն է **30** կոպ.։ Գրավաճառողներին 25% զեղչ։ Դիմել հեղինակին՝ Բէբուտովսկայա փողոց № 23.

(օ.ս.) առ. 908. 5—3

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև տուբերկուլինով, ԲԸԴԻՒ պրէպարատներով և էլեքտրականութեամբ։

Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ առաւօտեան ժամը 9 12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։ Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանձակայ)։ Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 699. 100—68

ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

II

Բագուն երկրորդ օրը տուեց 500 հազար ռուբլի։

Դա Բագու քաղաքի, Բագուի քաղաքային ինքնավարութեան կողմից էր։

Գումարը կը յանձնվի մասամաս, տարեկան 50,000 ռուբլի՝ վճարելով տասն տարվայ ընթացքում։

Այդ համակրելի որոշումից առաջ լուրեր էին պատում Բագուում, թէ քաղաքը ոչինչ չէ տալու կովկասեան պօլիտեխնիկումին, կամ տալու է շատ բիչ, որովհետև քաղաքային վարչութեան դումարկը ճնշված է սեփական կարեւոր ծախքերից և անկարող է ներկայումս առատաձեռն լինել բարձրագոյն դպրոցի համար, որը բացվում է ոչ այն պայմաններով, ինչպէս քաղաքը ենթադրում է եղել իր առաջին խոստումը տալու ժամանակ, երբ նա աչքի առաջ է ունեցել, թէ կը հաստատվի համալսարան և կը պահվի պետական հաշուով։

Այդ և դրա նման առարկութիւնները արվեցին և Բագուի քաղաքային դումայի բազմամարդ ժողովում դեկտեմբերի 10-ին։

Պէտք էր պարզաբանել խնդրի էութիւնը և Բագուի աջակցութեան նշանակութիւնն ու կարեւորութիւնը։

Թիֆլիսի պատգամաւորների ճառերը, Բագուի մի քանի ձայնաւորների համակրական փաստաբանութիւնները, մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ լուսաբանված հայեցակէտերը բոլորը եկան ստեղծելու նպաստաւոր տրամադրութիւն։

Եւ ստացվեց այն գեղեցիկ որոշումը, որը յիշատակեցինք։

Այդպիսով Բագուի երկու խոշոր հաստատութիւն՝ նաւթագործների ժողովը և քաղաքային ինքնավարութիւնը միասին տալիս են կովկասեան պօլիտեխնիկումին 900,000 ռուբլի գումար, որով մեծ զարկ է ստանում բարձրագոյն դպրոցի շուտափոյթ բացման խնդիրը և օրն են ցնդում չարամիտների դաւերը բարձրագոյն դպրոցի վերաբերութեամբ։

Բագուի նուիրատուութիւնները մի գեղեցիկ էութիւն ունեն կամ այն բանի մէջ, որ դրանցով մի մեծ արտայայտութիւն է ստանում կովկասեան կուլտուրական ինքնագործունեութեան գաղափարը։ Արդարև, կովկասեան բարձրագոյն դպրոցի սեփական միջոցներով հաստատվելը և առաջ տարվելը մի խոշոր գործ է, որը կը ծնի ապագայում աւելի ևս ընդարձակ կուլտուրական ձեռնարկութիւններ։

Մենք հաւատացած ենք, որ Բագուի հոյակապ օրինակը կը խրախուսի շատ-շատերին մասնակից լինել կովկասեան բարձրագոյն դպրոցի համար կազմվող ֆօնդին և Թիֆլիսի կոմիտէը հնարաւորութիւն կունենայ ասելու, որ նա ստացել է աւելի գումար, քան նա ծրագրել էր զուտ թիւով, և ուրեմն հնարաւորութիւն ունի աւելի ևս կատարեալ կերպով իրագործել իր առաջ դրած գեղեցիկ նպատակը։

Նաւթագործների ժողովը, ի միջի այլոց, ցանկութիւն յայտնեց, որ քիմիական բաժինը վերածվի հանքային բաժնի, որպէսզի կարող լինի բաւարարութիւն տալ թէ նաւթի և թէ ուրիշ հանքերի շահագործութեան պահանջներին։

Դա, անշուշտ, լրացումն է ծրագրի և կարող է ուշադրութեան առնվել վերջնական կազմակերպչական խմբագրութեան ժամանակ։

Կարեւորը հիմնական պահանջների բաւարարութիւն տալն էր։ Իսկ դա արդէն կատարված է բաւական մեծ չափով։

Արդարև՝ բարձրագոյն դպրոց հիմնելու համար կան պետական շրջանի հաւանութիւնը, նիւթականի ապահովութիւնը, Թիֆլիս քաղաքի պատրաստակամութիւնը՝ տանել գործը մինչև նրա վերջնական իրականացումը և գանազան հիմնարկութիւնների գործակցութիւնն ու համակրութիւնը։

Կովկասեան փոխարքան, որը այնքան նպաստել է բարձրագոյն դպրոցի բացման խնդրին, ստեղծեց մի անմոռանալի յիշատակ։ Թող դա սկիզբ լինի ապագայ կուլտուրական մխիթարութիւնների համար, որոնցից այնքան զուրկ է եղել մեր երկիրը։

Կովկասը կարող է բարգաւաճել և մտաւոր ու նիւթական հարստութիւններ հանդէս բերել։ Բայց միջոցներ են անհրաժեշտ եղած ոյժերը գործի դնելու, պայմաններ են հարկաւոր կուլտուրական նախաձեռնութիւնները կեանքի շրջանադարձութեան մէջ դնելու։

Ա. Քալանթար

ԴՈՒՄԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԱՑՍՐԻ ՄՕՏ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12 դեկտեմբերի

Պետերբուրգ. — Զմերային պալատի Նիկոլայեւեան դահլիճում բազդ ունեցան ներկայանալ Թագաւոր Կայսրին Պետական Դումայի անդամները։ Թւով 351 մարդ՝ նրանք դահլիճում տեղաւորվեցին նահանգների այբբենական կարգով։ Ներկայանալու ժամանակ ներկայ էր մինիստրների խորհրդի նախագահը։ Կայսրը դուրս եկաւ ժամը 3 ին։ Կայսրի երեւալուն պէս պատգամաւորների բարձրագոչ «ուրան» դղրդեցրեց դահլիճը։ Լսելով Դումայի նախագահի ողջոյնը, Թագաւոր Կայսրը մինիստրների խորհրդի նախագահի, Կայսերական պալատի մինիստրի, Դումայի նախագահի և հերթապահ ֆլիգել ադիւտանտի ուղեկցութեամբ բարեհաճեց անցնել ժողովված անդամների առաջից, սկսելով Արխանգէլի նահ. պատգամաւորների մօտից, արժանացնելով ողորմած խօսակցութեան։ Բարձրագոյն անցուդարձը տեւեց աւելի քան մէկուկէս ժամ։ Յետոյ Կայսրը դիմեց Դումայի անդամներին հետեւեալ խօսքերով.

«Ցանկանում եմ ձեզ բաղդաւոր անցկացնել տոները եւ վերադառնալ առյգ ու թարմ ոյժերով՝ յետագայ արդիւաւէտ ու համերաշխ աշխատանքի համար յօգուտ Ռուսաստանի եւ Իմ»։

Միաբան ուրան եղաւ պատասխան Կայսրի ամենաողորմած խօսքերին։ Երբ Նորին Մեծութիւնը հեռացաւ, Դումայի անդամները հիւրասիրվեցին, որի ժամանակ Դումայի նախագահը բաժակը բարձրացրեց Թագաւոր Կայսրի առողջութեան համար, որոտագին ուրաները և ազգային օրհներգի հնչիւնները դղրդեցրին պալատը։ Յետոյ ցնծագին բաժակ առաջարկվեց Թագուհի Կայսրուհու և Դահաժառանգ Արքայազնի առողջութեան համար։

—

Պետերբուրգ.—Պետական Դումայի 185 անդամի ստորագրութեամբ ուղարկված ամենահպատակ հեռագրի վրա Թագաւոր Կայսրին հաճելի եղաւ մակագրել՝ «Կարդացի գոհունակութեամբ»։

Հեռագիրը ասում է. «Դեկտ. 12-ին Ձերդ Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց բաղդաւորեցնել մեզ ողորմած ընդունելութեամբ։ Թոյլ տուէք մեզ, Կայսր, այդ ուրախալի օրվայ առիթով առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան արկանել մեր ամենահաւատարիմ զգացմունքները։ Ձերդ Կայսերական Մեծութիւն Ամենողորմած Թագաւոր. Ռուս երկրի ընտրեալների Կայսերական ողջոյնով և մեր աշխատանքների Կայսերական օրհնութեամբ բացվեց չորրորդ Պետական Դումայի կեանքի առաջին օրը։ Մեզ ուղարկողների անունից մենք ծարաւի ենք արտայայտելու հաւատարմութեան զգացմունքներ մեր Ինքնակալ Պետին և շնորհակալութիւն յայտնելու Ձեր Մեծութեան ողորմած խօսքերի համար։ Հաւատացէք, Թագաւոր, որ մենք, չը խնայելով մեր ոյժերը, մեր բովանդակ խելամտութիւնը կը լարենք հանգիստ ու բեղմնաւոր աշխատանքի համար ի փառս Ձեր Կայսերական Մեծութեան և ի բարիս մեր թանգագին հայրենիքի։ Իսկ եթէ ահարկու ամպերը ծածկեն մեր հայրենիքը, այն ժամանակ մենք ամենքս ինչպէս մի մարդ Ռուսաց Ցարի Ինքնակալ կամքով կը կանգնենք պաշտպանելու Ռուսաստանի պատմական պատգամները, նրա պատիւն ու արժանաւորութիւնը»։

ՀԱՅԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ ՄԱՍԻՆ

—

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ ԵՒ Անմահանալի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի

Գերապատիւ ժամանակաւոր կառավարչին Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի տէր Եփրեմ եպիսկոպոսի՝ հարազատի Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

Վասն յաւերժացուցանելոյ զմեծ յօբելեանն 1500-ամեայ գիւտի տառից հայոց և 400-ամեայ հայ տպագրութեան՝ Մեք անհրաժեշտ վարկաք նախապէս դիմել առ տէր Փոխարքայն Կովկասու և խնդրել գարտնութիւն ժողովարարութեան կամաւոր նուիրատուութեանց յանուն դպրոցական դրամագլխոյ (ֆօնդի) յօգուտ եկեղեցական-ծխական դպրոցաց մերոց։ Նորին պայծառափայլութիւն տէր Փոխարքայն ետ իրաւունս ժողովելոյ յընթացս միոյ ամի զնուէրս ի սահմանս Փոխարքայութեան իւրոյ վասն այդր նպատակի։

Քաջայայտ է Գերապատուութեան Ձեռ-

բում, որպէս և սիրելի ժողովրդեանս, զի եկեղեցական դպրոցք մեր կան ամենասպէս յանմխիթար վիճակի, ուստի անհրաժեշտ է առանց յապաղման ապահովել զգոյութիւն չքաւոր դպրոցաց մերոց, բանալ գնորս յայնոսիկ գիւղօրայս, հասարակութիւնք որոց ի խաւարի կան և ի տգիտութեան, զրկեալ խապառ ի փրկարար լուսոյ քաղաքակրթութեան։ Առ ի դարմանել և բուժել զմահաբեր վէրս տգիտութեան հայ ժողովրդեան մերոյ սիրելւոյ և առ ի բազմացուցանել զազգային կրթարանս, որք են գլխաւոր ազդակք զարգացման մայրենի լեզուի և գրականութեան և միանգամայն գոյութեան ազգիս, այսու Հայրապետական կոնդակաւ Մերով պատուէր տամք Գերապատուութեանդ՝ փութով կազմակերպել ընդ նախագահութեամբ Ձերով ի ձեռնհաս և ի հեղինակաւոր անձանց Թեմական Ցանձնաժողով և ամենայն եռանդեամբ սկիզբն առնել ժողովարարութեան յամենայն քաղաքս և ի գիւղս թեմիդ ի ձեռն տեղական մասնախմբից։ Զնուէրս տալ արձանագրել կանոնաւորութեամբ ի տուփարս և ի ցուցակս յղեալս առ Ձեզ ի Սինոդէ ս. Էջմիածնի և զամենայն ժողովեալ դրամս առաքել ի նոյն Սինոդն։

Բարոյական և ազգային պարտիք են ամենայն գիտակից անձանց, եկեղեցական-ծխական հոգաբարձութեանց և ուսուցչական մարմնոց դպրոցաց մերոց՝ լինել աջակից և նպաստող և աշխատել ամենայն արիաջանութեամբ վասն յաջողութեան դպրոցական գրամագլխոյ (ֆոնդի)։

Լիայոյս եմք, զի ամենեքեան, որք ըմբռնեն զօգուտն և զշահն եկեղեցական-ծխական դպրոցաց մերոց և գործեն վասն մատաւոր-բարոյական յառաջադիմութեան ազգիս, օժանդակեսցեն ազգաշունչ ձեռնարկութեանս այսմիկ ի յաւերժացումն Մեծի Յօրելեանի։

Օրհնեմք զնամայն ազգն հայոց և մաղթեմք ի Տեառնէ զբարգաւաճումն և զբազմացումն կրթական հաստատութեանց մերոց յիրջանկութիւն և ի քաղաքակրթութիւն ազգիս։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք ս. հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ, ամէն։

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 25-ն նոյեմբերի 1912 ամի
ըստ տոմարի Ռ.ՅԳՌ. ի Հայրապետութեան
մերում Ա. ամի յԱրարատեան Մայր Աթոռս. Էջմիածնի
ի Զաղարշապատ
թ. 1665.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 դեկտեմբերի

Կ. Պոլիս. — Թիւրքական լաւագոյն «Եադիգեար Միլլէթ» ակնանաւը վերջին կուսում չափազանց փչացել է և բերվել է Ոսկեղջիւր վերանորոգութեան համար։ Ցիշեալ տեղեկութիւնը տպող «Այէմդար» լրագիրը գրաւվեց։

—

Աթէնք.—Որոշվեց կառուցանել տալ դրէդնօուտ տիպի նոր ռազմանաւ։ Ցատկացված է 45 միլիոն ֆրանկ։

Եանինայի առաջ արտիլերիական կռիւը շարունակվում է ընդմիջումներով։ Գտնվեց 120 թիւրքերի դիակ։

—

Յէտինիէ.—Դեսպան Գիրսը յատուկ մասնաժողով հաստատեց Ռուսաստանից ստացվող նուէրները բաժանելու համար։ Ցանկացողները կարող են իրանց նուէրները ուղղել ուղղակի ռուսական միսսիային։

—

Ռուսական «Դոնէց» ռազմանաւը մեկնեց Մարմարիա ծովի ափը Բոգոսոյի և Դալիպոլիի միջև՝ պաշտպանելու քրիստոնեաներին թիւրքերի ջարդերից։

—

Կ. Պոլիս եկած փախստականները սարսափելի գոյներով են նկարագրում քիւրդերի, լազերի և չերքէզների Գալիպոլիի մօտի գիւղերում գործած կոտորածների մասին, որոնց զոհ են եղել միայն քրիստոնեաները։

—

Եւրոպական կաբինետների տրամադրութիւնը Լոնդոնի վեհաժողովի հետևանքի նկատմամբ դառնում է բացարձակ յուսահատ։ Համաձայնութիւն հազիւ թէ կայանայ։ Օրէցօր պէտք է սպասել բռնակցութիւնների խզման հեռագրին և պատերազմը վերսկսելու յայտարարութեան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 դեկտեմբերի

Պետերբուրգ.—Թագաւոր Կայսրին ներկայացաւ Վրաստանի էկզարխ Ինոկենտի արքեպիսկոպոսը։

Լայպցիգ մեկնեց զինուորական մինիստրը՝ ներկայ լինելու 1813 թ. կռիվ յիշատակին կառուցվող տաճարի հանդիսին։

—

Դէլի.—Փոխարքայ Հարդինգի տաքութիւնը ներկայումս նորմալ է, ցաւերը պակասել են։ Ամենայն հաւանականութեամբ Հարդինգը անկարող կը լինի կատարել իր պարտականութիւնները երկու շաբաթ շարունակ։

Ենթադրում են, որ Հարդինգի կեանքի դէմ մահափորձը հետևանք է դաւադրութեան։ Այն համոզմունքն է տիրում, թէ դաւաճանական շարժումը և անիշխանութիւնը շարունակում են գոյութիւն պահպանել։ սահմանադրական բարենորոգումները չօգնեցին։

—

Թէհրան.—Երէկ Սամսամուսի տանը կաբինետի Նիստի ժամանակ ժողովականներին մի խումբ բախտարգիներ, պահանջելով փողեր նիստում ներկայ գտնվող գլխաւոր զանձապահ Մօրնարից։ Երբ բախտարգիները զինուորական մինիստրի խորհրդով ցրվեցին, ծեծեցին ժանդարմին և Մօրնարի կառապանին։ Ռուսական և անգլիական միսսիաները պահանջում են պատժել յանցաւորներին։

—

Սոֆիա.—Պատգամաւորների շրջաններում այն կարծիքն է տիրում, որ չը նայած Լոնդոն մեկնած թիւրք պատգամաւորների տոնին, Թիւրքիան ստիպված կը լինի զիջել դաշնակից պատգամաւորների պահանջներին։ Կառավարութիւնը հաստատ վճռել է պնդել, որպէսզի Բոլգարիան ազատ մուտք ունենայ դէպի Մարմարա ծովը Բոգոսոյի միջոցով և ոչ մի դէպքում յետ չը կասել այդ պահանջից, անհրաժեշտ համարելով թուլացնել դրանով Թիւրքիային Եւրոպայում և մօտիկ ապագայի պատերազմի հնարաւորութիւնը խափանել։ Մարմարա ծովի մուտքը կարևոր է ընդունվում նաև վաճառականական տեսակէտից։

—

Բէլգրադ.—«Սամօուպրավանդ»յօդուած է նուիրել Վիէննայի լրագիրների այն տենդէնցիոզ տեղեկութիւններին, որ Սերբիայի և Չերնոգորիայի փոխադարձ յարաբերութիւնների միջև երևացել են փոփոխութիւններ, և այդ տեղեկութիւններն անուանում է հիմնված՝ ինտրիգանների վրա և թէ երկուստեք երկպառակութիւն սերմանելու նպատակին հետամուտ։ Սերբիան և Չերնոգորիան կը մնան անկեղծ բարեկամներ։ Սերբիան միշտ էլ պատրաստ է օգնելու Չերնոգորիային. ոչ մի նիւթական ու մօրալ զոհաբերութիւն ծանր չի լինի Սերբիային դէպի Չերնոգորցիները և դէպի նրանց հերոս միապետը տածած համակրանքի ապացուցման համար։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)
12 դեկտեմբերի

Տօկիօ.—Սոսրին պալատում հետաքրքիր կուսակցութիւններն են. սահմանադրականներ 216 հոգի, նացիոնալիստների օպպոզիցիա՝ 98, կառավարական կենտրոն՝ 34, անկախներ՝ 35, անկուսակցականներ՝ 5։

Լոգբական տեղեկութիւնների համաձայն, մի եապօնացի երիտասարդ, տեսնելով որ անկարող եղաւ սպանել Ֆելդմարշալ Եամագատային, անձնասպան է եղել նրա տան առաջ։

—

Տօկիօ.—Պրեմիերի և ծովային մինիստրի միջև կայացաւ կոմպրոմիս։ 1913 թ. ծովային մինիստրութեանը կը յատկացվեն 6 միլիոն 9 ի փոխարէն՝ ծովային ոյժերը սաստկացնելու համար։

Հանքերից յունվարից մինչև դեկտեմբեր ստացվել է 9 միլիոն իէնի ոսկի։

—

Շանհայ.—Մանգոլիան փրկող չինական ընկերութեան անօնիմ նամակների պատճառով, որոնցով մահվան սպառնալիքներ են կարդացվում ռուսաց հիւպատոսարանի, ռուսաց բանկի պաշտօնեաներին և դէպի Ռուսաստանը բարեկամաբար տրամադրված չինացիներին, ոստիկանութիւնը ձեռք է առնում ռուսաց գաղութի և նրա ստացուածքի պաշտպանութեան միջոցներ։ Բոյկոտը վերջացաւ։ Հակառուսական ագիտացիան շարունակվում է։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Կ. Պոլսից հեռագրում են դեկտեմբերի 8-ից. «Բարենորոգումների նախագիծը Անատոլիայում նախատեսում է այն վիճելի հողերի վերջնական բաշխումն, որոնց վրա իրանց իրաւունքներն են յայտնում հայերը և քիւրդերը»։

—

Կ. Պոլսի լրագիրներում հրատարակված է Հայաստանի բարենորոգումների ծրագիրը, ուր նախագծված է հիմնել խառն մահմեդական-անգլիական խորհրդատուի նախագահութեամբ՝ 6 տարվայ ընթացքում բարենորոգումներն իրականացնելու համար։

—

Լոնդոնում ընակվող հայերը ներկայացնելով մի ընդարձակ գրութիւն թիւրքահայերի թշուառ կացութեան մասին, խնդրեցին արտաքին գործերի մինիստր Գրէյից առաջարկել այն Լոնդոնի դեսպանների վեհաժողովին իր պաշտպանութեամբ հանդերձ։ Գրէյը ցոյց տուեց սիրալիր ընդունելութիւն։

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԹԻՒՐՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Օրէ-ցօր թիւրքիայում հայերի դրութիւնը դառնում է աւելի ևս անտանելի։ Հեռագիրները հաղորդում են ջարդերի և քիւրդերի առանձին յարձակումների շարունակութեան մասին։ Կ. Պոլսում պահվող բոլոր յայտնի քիւրդ պատգամաւորները փախել են հայրենիք և, ջարդարար հրամայախմբերի գլուխն անցած ահաբեկում են հայերին։ Շատ գիւղեր քարուքանդ են արված։ Այնթաբում և նրա շրջակայքում կազմակերպվել է «Վրէժխնդրութեան կոմիտէ», որ ունի, մի քանի տեղեկութիւնների համաձայն, մօտ 2000 անգամ։ Վանի շրջակայքում քիւրդերը սպանեցին հայոց թեմական տեսչին։ Կովկասեան հայ լրագրերի թղթակիցները հաղորդում են մօտ 2000 ապանված և հաշմանդամ հայերի։ Իշխանութիւնները սովորականի նման նայում են մատների արանքից այն ամենի վրա, ինչ որ կատարվում է իրանց ջուրջը, և վերջերս լրագիրները արտատպեցին Աւասխայի կայծակամի հեռանալ խօսքերը ի պատասխանի հայերի բողոքների։ «Քրիստոնեաները երկար չեն ապրելու։ Նրանք են մեղաւոր խլամի վրա բարդվող դժդաղութիւնների մէջ»...

Այս բոլորիս Հայաստանում կատարվող սարսափները՝ երիտասարդ թիւրքերի քառամեայ անհետաքրքիր քաղաքականութեան ընական հետևանքն են, թիւրքերի, որոնք կամեցան ինչպէս էլ լինի պահպանել միապետական (ունիտար) բէժիմը պետութեան մէջ, ուր տիրող ազգը կազմում էր (մինչև Տրիպոլիսը, Արշիպելագոսը և բալկանեան հողերը կորցնելը) հազիւ 25% պետութեան բոլոր բնակիչների։ Երիտասարդ թիւրքերի բութ, յամառ հակադրութիւնը ֆեդերալիստական պահանջներին, որ առաջադրում էին ոչ միայն քրիստոնեաները, ոչ միայն արաբները, այլև թիւրք լիբերալների խոշոր մասը, գերեզման փորեց հէնց իրան՝ «Մ. և Ա.» կուսակցութեան տիրապետութեան համար և ոչ-թիւրք ազգութիւններին չը տուեց գոյութեան որևէ կայուն հիմունք թիւրքական հովանաւորութեան ներքոյ։

Թիւրքիային կարող է փրկել սոսկ լայն ֆեդերալիզմ։ Տիրող կուսակցութիւնը մերժեց այն և գրանով ապացուցեց իր քաղաքական կուրութիւնը։ Այժմ եթէ անգամ կամենան մացնել ֆեդերալիստական կազմակերպութիւն, արդէն ուշ կը լինի։ Տրիպոլիսը, Արշիպելագոսը և բալկանեան վիլայէթները կորցնելով՝ հողը ֆեդերալիզմի համար բաւականին փլվում է։ Սուլթանի պետութիւնը այժմ մի բանի է սպասում՝ կատաղի կռիւ արաբական և թիւրքական տարրերի միջև, որի մէջ յոյները, որոնք դեռ մնում են Փոքր Ասիայում և Եւրոպայի վերջին ծայրում, և հայերը անխուսափելիօրէն մատնված կը լինեն լիակատար ջնջման։

Որովհետև ոչինչ ցուցումներ չը կան, որ նոր բէժիմը, որ կը հաստատվի Թիւրքիայում պատերազմը վերջանալուց յետոյ, ընդունակ կը լինի անել այն, ինչ չը կարողացան անել երիտասարդ թիւրքերը իրանց բարգաւաճման և իրանց իշխանութեան ծաղկման վայրկեանին, այն է՝ կռիւ յայտարարել մահմեդական ֆանատիկոսութեանը յանուն եւրոպական կուլտուրայի։

Ի՞նչ է հետևում դրանից։ Հարցը, կարծեմ, պարզ է։ Ազգերու իրաւունք ունեն ամեն ազգային օրգանիզմներ, և մինչև անգամ եւրոպական դիպլոմատիայի կեղծաւորութիւնը երբէք չէր հասնում այն կէտին, որ հերքէր այդ իրաւունքը։ Եւրոպական դիպլոմատիան շատ շատապեց արխիվը դցելու հայկական հարցը։ Հէնց այժմ, երբ հինգ հայկական վիլայէթներում թափվում է արիւնը և արձակվում են հառաչանքներ, հայոց հարցը լուծված համարել քաղաքական աններելի դիպմատիզմ կը լինէր։

Մենք լաւ ենք հասկանում, դիպլոմատիան վախենում է այնպիսի հարցեր յարուցանել, որոնցից միանգամից մի քանի ախորժակներ են բացվում։ Սակայն հէնց մեր աչքի առաջ բալկանեան դէպքերը ցոյց տուին, որ չէ կարելի անվերջ լռութեան տալ այդպիսի հարցերը։ Քանի որ հոսում է արիւնը վէրքերից ժողովրդի մարմնի վրա, չեն կարող օգնել ոչինչ ապեղանիներ, միւրջ-շուեդեանի նման։

Հայերն այժմ գտնվում են այնպիսի դրութեան մէջ, որ թողնել նրանց թիւրքերի իշխանութեան տակ՝ կը նշանակէ,—կրկնում ենք,—ջնջման դատապարտել նրանց։ Նրանց կարելի է փրկել միայն մի միջոցով, այն է՝ հինգ վիլայէթներում, ուր հայերը մեծամասնութիւն են կազմում (Վան, Բիթլիս, Դիարբէքիր, Երզրում, Ադանա, կարելի է դրանց միացնել Անգօրայի վիլայէթի մի մասը) սահմանել քրիստոնէական իշխանութիւն։

Թէ որպիսի իրաւաբանական ձևեր պէտք է ունենայ Հայաստանի նոր կազմակերպութիւնը, դրա մասին, անկասկած, այնքան դժուար չէ լինի համաձայնութիւն կայացնել, եթէ միայն Եւրոպան ակզբունքով ընդունէ հայ ժողովրդի այդ պահանջը։ Մենք կարծում ենք, որ Թիւրքաց Հայաստանի նոր կազմութեան ամենահասարակ և ախորժակները ամենից սակաւ գրգռող ձևը եւրոպական կօնցէրտում հեռանալը կը լինէր։

Շատ հասարակ ձևով կարելի է որոշել այժմ այն հողը, ուր հայերը մեծամասնութիւն են կազմում, այն ժամանակից, երբ քրիստոնեաներին թոյլ է տրված զինուորական ծառայութեան մէջ մտնել, իւրաքանչիւր նորակոչ զինուոր վերցվում է արու ազգաբնակութեան որոշ քանակութիւնից։ Հէնց այդ ցուցակները կարող են հիմք ծառայել հաշուի համար, և, ի հարկէ, հայերը դժգոհութիւն չեն յայտնի, եթէ իրանց հողից անջատվեն այն հողերը, ուր թիւրքերը կամ քիւրդերը մեծամասնութիւն են կազմում։ Նրանց համար տարածութիւնը մեծ նշանակութիւն չունի։ Այդ հողամասը պէտք է հանել օսմանեան կայսրութեան վարչական մարմնից և տալ նրան ինքնուրոյն կազմակերպութիւն, գլուխ ունենալով քրիստոնեայ ընդհանուր նահանգապետ։ Պետութիւնների հաւաքական հովանաւորութիւնը պէտք է ապահովէ այդ կազմակերպութեան անձեռնմխելիութիւնը և երաշխաւորութիւն տայ նրան, որ սուլթանի գերագոյն իշխանութիւնը դուրս չը գայ որոշ սահմանից։

Ամբողջ գործը նրանումն է, թէ ինչ կերպ հնարաւոր է գործնականապէս արծարծել այդ հարցը։ Մեզ թւում է, որ դա ռուս դիպլոմատիայի պարտաւորութիւնն է։ Լոնդոնի կօնֆերէնցիան այս բոլորիս զբաղված է, բացի բալկանեան հարցից, թիւրքաց ճգնաժամի հետ կապ ունեցող և այլ հարցերով։ Հայկական հարցը պէտք է մտնի դրանց թւում։ Եթէ ռուսական դիպլոմատիան այդ բանը պահանջի, երեքպետեան համաձայնութեան պետութիւնները անկասկած կաջակցեն նրան, իսկ երեքպետեան դաշնակցութեան պատկանող պետութիւնները պատճառ չեն ունենայ առարկելու, թէ առաջուց քննութեան հիմք ընդունվի պետութիւնների հաւաքական հովանաւորութիւնը։

Եւ անկասկած մեր կառավարութեան շահն է, որ հարցը արծարծվի հէնց Ռուսաստանում, այլ ոչ Անգլիայում կամ Ֆրանսիայում։ Ռուսաստանը համարեա 2 միլիոն հայ հպատակներ ունի։ Թէ նրանք և թէ թիւրքական սահմանից դուրս ապրող հայերը կիմանան գնահատել այդ նախաձեռնութիւնը։

Դէպի դրան է կոչում ոչ միայն մարդասիրութեան պարտքը, այլ և ամենահասարակ իրական շահը։ Ջիվէլեկեան

(«Բ. Բ.»)

ՄԵՐԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՇՈՒՐՋԵՏՔՐԸ)

(Սեփական թղթակից)
Կ. Պոլիս, 30 նոյեմբեր

✦ Լութֆի Ֆիքրի «Թանզիմաթի» այսօրուան թիւին մէջ կը մեկնէ Քեամիլ փաշայի կողմէ «Թանի» Պոլսոյ թղթակից Ժան Ռօզի եղած յայտարարութիւնները Լութֆի Ֆիքրի կըսէ, թէ Քեամիլ փաշա մեծ լակեաց մըն է, բայց շատ ալ գործունեայ է։ Զայս ցոյց կուտան «Թանի» թղթակցին ըրած յայտարարութիւնները։ Անոնց ստուգութեանը վրայ բնաւ տարակոյս չկայ, զի թղթակիցը կը յայտարարէ, թէ զանոնք զրաւոր ներկայացուց եպարքոսին և անիկա հաւանութիւն յայտնեց անոնց հրատարակութեան։

Քեամիլ փաշայի խօսքերը կատարեալ ծրագիր մը կը պարունակեն։

Քեամիլ փաշա կըսէ. «Մեր օրէնքները բնաւ տարբերութիւն չեն դներ խլամներուն և քրիստոնեաներուն միջև, ու մեր դիտումն ու փափաքն է անոնց հետ վարուիլ կատարեալ հաւասարութեան հիման վրայ։ Նոյնպէս կը յարգենք անոնց լեզուներն ու սովորութիւնները։ Կուսակցութեանց իրաւունքներն ու իրաւասութիւնները պիտի ընդարձակենք և շատ ազատական քաղաքականութեան մը կուսակից ենք։

Քեամիլ փաշա իր այս խօսքերով մեծ ծրագրի մը հիմերը դրած կըլլայ։

Եւ ահա թէ ինչպէս։

ա) Նախ և առաջ, եպարքոսը հիմէն կը ջնջէ 5—10 օրէ ի վեր շրջող անպիտան զրոյցները, թէ սահմանադրութիւնը պիտի վերնայ։ Քեամիլ փաշան ճանչցողները բնաւ չեն կրնար տարակուսիլ, թէ եպարքոսը սահմանադրութիւնը չի ջնջեր։ Բայց Քեամիլ փաշա ոչ միայն շրջող զրոյցները կը հերքէ և կըսէ, թէ բնաւ չպիտի դպչի սահմանադրութեան, այլ կը յայտնէ նոսա, թէ բնաւ երես չի տար անոնց, որ խորհրդարանական դրութեան դէմ կը գրեն և այս կերպով կը ծուռայեն հակասահմանադրականներուն դատին։ Տարբեր բան մը ցոյց չի տար իր այն խօսքը թէ՝ «Շատ ազատական քաղաքականութեան մը կուսակից ենք»։ Խորհրդարանական դրութեան ոգին ազգային վեհապետութիւնն է, և խորհրդարանական դրութիւնը վերցնելը՝ կը նշանակէ ազգային վեհապետութիւնը ջնջել։ իսկ ազգային վեհապետութիւնը ջնջելով՝ վեհապետութեան դիրքէն բայրի ատիճանին իջուցուած կըլլան օսմ. այլազան տարբերը։ Ասիկա ոչ միայն չի համապատասխաներ մեծ ազատականութեան մը, այլ մինչև իսկ հասարակ ազատականութեան մը։

բ) Եթէ Քեամիլ փաշա բաւականացած ըլլար ըսելով Ժան Ռօզի, թէ խլամ և քրիստոնեայ բոլոր օսմանցիները հաւասար են օրէնքներուն առջև, այն ատեն բացէ ի բաց կըսենք իրեն. «Փաշա, օրէնքներուն առջև հաւասարութեան այս տրամադրութիւնը այս երկրին մէջ կը լսենք թանզիմաթէն ի վեր։ բայց հակառակ ասոր՝ զորձերը բնաւ չշտկուեցան և թանզիմաթէն ետքն ալ, ինչպէս անկէ առաջ, օսմ. այլազան տարբերը դժգոհ մնացին և դժբաղդութիւններն ու ազէաներն իրարու յաջորդեցին։ Պարզապէս ասոր արդիւնքն է, որ բուլգար բանակը այսօր մայրաքաղաքէն 60 կիլոմետր միայն անդին կը գտնուի։ Օրէնքներուն առջև հաւասարութիւն պահելը չի բաւեր հանդարտութիւն առաջ բերելու։ Մնաց որ, մենք, գործնականին մէջ այս հաւասարութիւնն ալ ապահոված չունինք։ Բայց Քեամիլ փաշա տարբեր խնդիր մըն ալ կը շոշափէ, ինչ որ ուրախութեամբ կողջունենք։ Կըսէ թէ «լեզուներն ու սովորութիւնները պիտի յարգենք»։ Բնականաբար, լեզուները յարգել չի նշանակեր թէ «արգելք չպիտի ըլլանք անոնց խօսուելուն ու գրուելուն, և ըսուածներուն ու գրուածներուն համար պատիժ չպիտի տանք», այլ կը նշանակէ, թէ «ամենուրեք տեղական լեզուները պաշտօնական թիւրքերէն լեզուին չափ պիտի յարգենք»։

Ուրախութեամբ կը տեսնենք նաև, որ Քեամիլ փաշա բնաւ չի վախնար ապակեդրոնացումի խրտուիլակէն, որովհետև բացէ ի բաց կը յայտարարէ, թէ «նահանգներուն իրաւունքներն ու իրաւասութիւնները պիտի աւելցնենք»։ Կերևի թէ Քեամիլ փաշա պայմանաժամ մը կուզէ Եւրոպայէն, իր ծրագրին գործադրման համար, զի ինչպէս այն հարցումին, թէ «բարենորոգումներու ծրագիրները պատրաստ են», ըսեր է. «Անշուշտ, բայց ամեն ինչ տեղի պիտի ունենայ իր ժամանակին. հիմա հարկ է պատերազմը վերջացնել, անկէ ետքը պիտի զբաղինք բարենորոգումներով»։ Լութֆի Ֆիքրի բէյ է վերջոյ կը փափագի հաշտութեան կնքումէն անմիջապէս ետքը գործը սկսիլ և շուտով գումարել երեսփ. ժողովը, որովհետև առանց անոր՝ բարենորոգման ոեւէ ծրագիր կարելի չէ ի գործ դնել։

✦ Մուրադ-բէյ, դարձեալ «Թանզիմաթի» մէջ կը յուզէ սահմանադրութեան և ապակեդրոնացումի խնդիրը։ Մուրադ-բէյ անդրադառնալով կառավարութեան դէմ եղած զրպարտութիւններուն, թէ կուզէ սահմանադրութիւնը ջնջել, կըսէ, թէ այս զրոյցները տարածողներուն նպատակն է պարզապէս երկրին գլխուն նոր փորձանքի մը գետինը պատրաստել։ «Բայց կառավարութեան նուիրական պարտականութիւնն է այս փորձանքին տեղի չտալ։ Յաջողելու համար նախ պէտք է հաշտութեան բանակցութիւններուն յաջող ելք ունենալը տեսնելուն պէս՝ անմիջապէս հրամայել ընտրութիւնները կատարել և խսկոյն գումարել երեսփ. ժողովը։ Կրնայ ըլլալ, որ ասիկա անպատեհութիւններ ունենայ, բայց այդ անպատեհութիւնները երես. ժողովը չգումարելու անպատեհութեան առջև ոչինչ են։ Շատ պարզ է ու կարճ՝ կառավարութեան տալիք պատասխանը անոնց, որ կըսեն. «Սահմանադրութենէն ինչ հասկցանք որ գանիկա ուզենք։ Մեր գլխուն եկած փորձանքին պատճառը անիկա է»։ «Դուք սահմանադրութիւնը ձեր և ձեր ժամանակ տեսաք, որ իրաւունք ունենաք անոր դէմ առարկութիւն ընելու»։ Եւ արդարև, մենք չտեսանք սահմանադրութիւն, որովհետև սահմանադրութիւն ցոյց չտուին մեզի, ցոյց տալ չուզեցին և սահմանադրութիւն ուզող ազնիւ դէմքերը խեղդեցին բանակութեան յորդած մրուրին տակ։ Եթէ սահմանադրութիւնը իրօք հաստատված ըլլար երկրին մէջ և նշաններ երևէին, որ պիտի շարունակուէր, այն ատեն մեր փորձանքը սահմանափակված կը մնար Բոսնա-Հերսէկի իւրացումին և Բուլգարիոյ անկախութեան հռչակման խնդիրներուն մէջ, որ ծաղեցան սահմանադրութեան առաջին օրերուն։ Թէ սահմանադրութիւնը ինչ բարերար դեր պիտի ունենար, ասոր ապացոյց է առաջին օրերուն իսկ մակեդոնական խառն վարչութեան վերջ տրուիլը։ Բայց մենք փոխանակ սահմանադրութիւնը հաստատելու, Եըլդզի բռնակալութիւնը ընդօրինակեցինք ու տէրութեան և հայրենիքին փրկութիւնը ձեռքէ փախցուցինք։ Մէկ տարիէն ալ աւելի վար իջանք այն ատիճանէն որ որոշուեր էր Ռէվալի տեսակցութեամբ։ Բայց տակաւին ահագին երկիր մը կը մնայ մեր ձեռքը և կարելի է

որ երբ ազգակ ձեռքեր կառավարեն զայն, հինէն աւելի փայլուն վիճակ մը յառաջ գայ։ Բայց այս տեսակ մարդիկը մէկ արտի մէջ միայն կը հանին, այն է՝ սահմանադրութեան, գործերը հրապարակաւ, հանրային կարծիքին հակակշիռին ներքև տեսնելու և պարտուց ու պատասխանատուութեան արտին մէջ։ Մենք փութալ իսկ չենք կրնար անցնել, թէ սահմանադրութենէն տարբեր ուղի մը կայ փրկութեան։ Եթէ դառնանք դէպի բռնակալութիւն, ցոյց տուած պիտի ըլլանք, որ անկարող ենք այս երկիրը կառավարելու և քաղաքակրթուելու, ու անոնք որ մեր երկրին աչք տնկած են՝ յարմար առիթը պիտի գտնեն զանիկա փայ-բաժին ընելու։

«Մեր փրկութիւնն այն է, որ ստեղծենք ազգը, որ գոյութիւն չունի հիմա։ Երկու միջոց կայ զլխաւորաբար։ Սահմանադրութիւն և իրաւանց ընդարձակում։ Այսինքն ազգը տէրութեան գործերուն մասնակից ընելով՝ անոր գոյութիւն մը տալ։ Եթէ իրական սահմանադրական դրութիւն մը հաստատենք և լրջօրէն անոր համը առնենք մանք մէհմէդչիքներուն և թիւրքութեան յատուկ յամառութեամբ մը չորս ձեռքով անոր փաթթենք և ալ չուզենք զայն ձեռքէ հանել, այն ատեն կը մտնենք փրկութեան դռնէն ներս։ Կարևոր ազգակ մը ունինք այսօր երկրին մէջ սահմանադրութեան համար, այն է մեր կայսրը, որ անձը նուիրած է անոր, մէկդի դնելով ընտանեկան ու անձնական ամեն հաշիւ։ Եւրոպական վեհապետներուն մէջ այս մասին նշանաւոր հանդիսացած Լուի Փիլիպ անգամ այս աստիճան բարձրութիւն ցոյց չէր տուած։ Գիտնանք սահմանադրութեան յարգը և ընդունինք, թէ հոն է փրկութիւնը։ Այս ներքաշնակութիւնը խանգարող ձայներն, ուրկից ալ գան, դաւաճանութիւն են հարենիքին դէմ։

Հայրդի

ՆԱՄԱԿ ԱՐՊԱԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 4 դեկտեմբերի

Հայր Մելիք-Թանգեանի Էջմիածին մեկնելուց յետոյ լուութեան մատնուեց Ատրպատականի Թեմական հարցը, որն այնչափ եղակի կարևորութիւն ունի մեզ համար, երբ մանաւանդ այս բոպէիս գոյութիւն չունեն ոչ թեմական պատգամաւորական ժողով և ոչ թեմական խորհուրդ։ Այն, առաջնորդական փոխանորդ կարապետ ք. Մանուկեան ըստ իւրմանն աշխատում է, սակայն նրա առանձնական ջանքերը բաւական չեն Ատրպատականի պէս մի պատատխանատու թեմի պահանջներին բաւարարութիւն տալու համար։

Նիւթականի կողմից Ատրպատականի առաջնորդարանը մնանկութեան աստիճանի վրա է կանգնած։ Տպարանը բաւարար աշխատանք չունի և անիրեւի պարտքերի ներքև է գտնվում, չերաշխաւորելով նոյնիսկ ներկայի ծախսերը։ Նախորդ թեմական կարապետ սրբազանի օրով և գործակցութեամբ ոմն Եսովք Բժշկեանի աւանդ դրամները ծախվեցին մի փոքր մասով ևս բերելու մտօք, այսօր ծանր բեռ է եղել Ատրպատականի առաջնորդարանին՝ չը կարողանալով վճարել Բժշկեանի որդոց կրթական ծախսը բողոքական հայանքի դպրոցին, ուր ուսանում են Բժշկեանի որդիքը։

Մենք առանձին մխոք չենք որդեպրում կարապետ սրբազանի Ատրպատականում ունեցած գործունէութիւնը մրոտելու։ Նա ունի իր որոշ տեղը, դրուատելի գործունէութիւնը, սակայն իւչ վերաբերում է նրա՝ ազգանի համար և այլ նիւթական գործունէութեան, չենք կարող գովել՝ ծանօթ լինելով իրերի կացութեանը։

Աչքի առաջ ունենալով Ատրպատականի թափուր վիճակը, սպասելի է Էջմիածնից, որ օր առաջ կարգադրվի Ատրպատականի Թեմական ընտրութիւնը, զգալով իրերի կացութիւնն Ատրպատականում։ Հ—ն

ՆԵՐԴԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈԳՈՒՏ «ՄՇԱԿԻ» ՖՈՆԴԻ

Ստացել ենք 1) Թիֆլիսում, Առաքել Վարդապետեանից՝ 10 ռուբ., 2) Բրիսէլից, ս. Գայիանէ Պռնաւուսնուց՝ 50 ռուբ.։ Ընդամենը 60 ռուբլի։ Նախորդ ստացած գումարների՝ 29,739 ռ. 21 կ. (տես «Մշակ» № 264) հետ միասին ընդամենը 29,799 ռ. 21 կոպ.։

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻՆԵՐԻ ՄԵԾ ԿԱՐԻՔԸ ՄԵՐ ԳԻՒՂԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

I

Եթէ մեր գեղջկուհին այնքան տառապում է գլխաւորապէս՝ կանոց հիւանդութիւններից և ծննդաբերութեան ժամանակ։ Եթէ կանոց թիւը մեր ազգաբնակութեան մէջ համեմատած արական պակաս է, մինչ լուսաւոր երկիրներում հակառակն ենք տեսնում. եթէ մեր գիւղօրայքում շատ յաճախ է պատահում իգական սեռի վաղաժամ մահը ծննդաբերութեան ժամանակ և մանուկների տարատեսակ մահացութիւն, վերջինը՝ թէ անչափահաս ծնողների տգիտութեան պատճառով և թէ զանազան տարափոխիկ հիւանդութիւնների, մանաւանդ ծաղկի և այլն, դրանց գլխաւոր պատճառներից մէկն էլ բժշկական օգնութեան անբաւարարութիւնն է, իսկ մանկաբարձուհիների համարեա կատարեալ բացակայութիւնը։

Ներկայումս՝ գաւառական բուժարաններում կան պաշտօնական մանկաբարձուհիներ բաւարար ոռճիկով, որոնք անծանօթ լինելով տեղական լեզուներին ու վարք ու բարքին՝ չեն հրաւիրվում տեղացիներից, այլ նրանց գործունէութիւնը սահմանափակվում է բուժարաններում և գաւառի կենտրոնատեղերի ընտանիքներում։

Բուն ազգաբնակութեան մէջ մանկաբարձական ամբողջ գործը գտնվում է տգէտ տատմէրների ձեռքում, իսկ դժուար ծնընդաբերութեան ժամանակ, երբ հարկաւորվում է մի օրինիչ օպերացիա, հրաւիրում են խաշնարածներ, որոնք սատցել են փորձառութիւն անասունների վրա։

Սպասել սրանցից ցանկալի օգնութիւն՝ ի հարկէ անկարելի է, մանաւանդ որ նրանք իրանց ագիտութեամբ և սարսափելի կեղտոտութեամբ շատ յաճախ պատճառ են դառնում ծնողաբեր կանանց՝ թէ մահվան, թէ յետ ծնողական վատանգաւոր վարակիչ հիւանդութիւնների, կամ սաստիկ վնասուածների սեռական գործարանների. վիրաւորման, պատռուածների, մահաբեր արիւնհոսութեան արգանդից և այլն։ Այդպիսի դժբաղդ դէպքերի հետևանքներ առիթ են ունեցել դիտել շատ գաւառական բժիշկներ։

II

Որպէսզի հասկանալի լինի մանկաբարձուհիների մեծ կարևորութիւնը ամբողջ Ռուսաստանի համար և մեր Կովկասի, բարձր պետական բժշկական խորհրդի նախագահ յայտնի մասնագէտ ակուշեօր՝ պրոֆ. Բէյնը դեռ 1904 թ. IX Պիրոգովեան համաժողովում արել է մի շատ կարևոր պատճառաբանված զեկուցում վերոյիշեալ հարցի առիթով։

Բերենք այդ զեկուցագրից, որը դուրս է եկել առանձին զրքոյկով*), մի քանի հատաքրքրական հատուածներ։

Գերմանիայում չը նայած մեծ քանակութեամբ բժիշկների և մանկաբարձուհիների, ինչպէս գրում է հռչակաւոր պրոֆ. Դիրսենը, ամեն օր վախճանվում է մէկ կին արդանդի արիւնհոսութիւնից ծնողաբերութեան ժամանակ։ Անգլիայում յայտնի չէ թէ որքան են վախճանվում ծնողաբերութեան ժամանակ նոյն պատճառով. միայն յետ ծնողական հիւանդութիւններից վախճանվում են 4-ը 1000 ծնողաբեր կանանցից։ Ռուսաստանում եթէ վերցնենք մօտաւորաւորապէս՝ 5 ը, կը սատանք ամեն տարի 30,000 մայր՝ 6 միլիոն ծնողաբերութիւն հաշուելով։

Այդ կորուստը աւելի մեծ է ամենատատիկ արիւնահեղ պատերազմից, իսկ եթէ հաշուենք որբերին՝ մայրերի մահից յետոյ, վիրաւորեալ և հաշմանդամ կին ինվալիդներին կանանց հիւանդութիւնների, նրանց կոր-խոցերով, պատռուածներով, կոնքի գործարանների՝ արգանդի և այլն տեղահանվածը, նրանց յարատև բորբոքմամբ և այլն, որոնք վերջանում են թէ վաղաժամ մահով և թէ տևում են երբեմն ցմահ, այն ժամանակ դրութիւնը աւելի սարսափելի կը ներկայանայ մեզ։

Վերոյիշեալ պատճառներից թէ որ աստիճան քայքայվում է ընտանեկան կեանքը թէ նիւթականապէս և թէ բարոյապէս ընտանիքի գլխաւոր անդամի՝ կնոջ առողջութեան խանգարմամբ, երբ նա դառնում է անընդունակ իր՝ թէ ամուսնական և թէ անտեսական պարտականութիւնը կատարելու, դա հասկանալի է։ Գաւառներում ապօրինի կանանց պահելը և ապ հնարակ բարոյականութեան անկման գլխաւոր պատճառներից մէկն էլ կանանց հիւանդանալն է, որը մենք դիտած ենք քանիցս գաւառներում։

Մասամբ և այն՝ ժամանակիս անհամապատասխան օրէնքը, որ քանանոներին արգելվում է կրկնամուսնութիւնը, որը վաղուց պիտի վճռէր հոգևոր բարձր իշխանութիւնը դրական կերպով։

Ըստ պրոֆ. Բէյնի, Ռուսաստանում մանկաբարձուհիների թիւը հասնում է 6000-ի, որոնցից կէսը միայն գաւառներին է տալիս։ բայց հարկաւոր է առնուազն՝ 60,000, որպէսզի հաւասարվենք Եւրոպական երկիրներին և Բալտիական նահանգներին, ուր, շնորհիւ տեղական աւելի կուլտուրական ազգաբնակութեան, մանկաբարձուհիների քանակը բաւարար է։

Սակայն ևս կովկասը զուրկ է այդ բանից։ մեզ մօտ մանկաբարձուհիների թիւը հասնում է մօտաւորապէս 400-ի, որոնցից գաւառներին՝ 70. Մեր երկրում ծնողաբեր կանանցից միայն 1874-ն է ծնում հիւանդանոցներում, այդ նշանակում է՝ 0,5%, մնացած 99,5%՝ արտաքոյ հիւանդանոցների և տատմէրների ձեռքով։

Վերոյիշեալ պրոֆ.-ը Կիէվի համալսարանում եղած ժամանակ՝ իր կլինիկայում կազմակերպել էր մանկաբարձուհիների մեծ պակասը մասամբ լրացնելու համար պատրաստել՝ փոքր ի շատէ պատրաստված գոնէ պրակտիկանտ մանկաբարձուհիներ՝ գեղջկուհիներից՝ անգամ անգրագէտ՝ 8 ամսում, իր կլինիկայում, ծանօթացնելով նրանց մաքրութեան, ծնողաբերութեան թեթև միջոցների հետ և այլն։ Հետևանքը կեանքում, ինչպէս զեկուցեց վերոյիշեալ համաժողովում բժիշկներից մէկը, շատ բաւարար է։

Մանկաբարձական հարցի առիթով դեռ 1904—5 տարիներում զետեղել էր մի քանի յօդուածներ «Առողջապահիկը» բժ. Արծրունու խմբագրութեամբ, կոչ անելով որ մեր կանայք առանձին ուշ դարձնեն այդ հարցի գրական լուծման վրա, ի նկատի ունենալով մեր գեղջկուհու՝ աւելի քան սարսափելի դրութիւնը։

Մեր երկրի փոխարքայի օգնական Վատացին իր 1910 թուի ճանապարհորդութեան ժամանակ Սվանեթիայում տեսել էր մանկաբարձուհիների մեծ կարիք այդ յետընկած շրջանում։ Նա վերադառնալուց՝ խոկոյն հարց էր բարձրացրել և դիմել Քութայիսի նահանգապետին, թէ արդեօք չէ կարելի Սվանեթիայից աղջիկներ ուղարկել Թիֆլիս՝ Օլգինեան մանկաբարձական դպրոցում մանկաբարձուհիներ պատրաստելու, որպէսզի նրանք վերադառնան իրանց հայրենի երկիրը պաշտօնավարելու։

Նոյն կարիքը զգացվում է և մեր գիւղական ազգաբնակութեան մէջ, ինչպէս յիշեցինք վերև՝ խօսելով պրոֆ. Բէյնի զեկուցման մասին, ուր ի միջի այլոց, յայտնի պրոֆ.-ը ծայրաստանների համար պահանջում է մանկաբարձուհիների տեղական լեզուների գիտութեան անհրաժեշտութիւնը։

Բժ. Բ. Աղասարեան

ԱԻ. ԱՐԱՄԽԱՆԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Նոր-Բայազէտ, 10 դեկտեմբերի

Երէկ, դեկտ. 9-ին, ծխ. դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ տեղիս ս. Աստուածածին եկեղեցում պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Արամխանեանի համար։ Հոգեհանգստին ներկայ էին բարեկարգիչ Արտակ վարդապետը և փոքրաթիւ հասարակութիւն։ Երգում էր դպրոցի քառաձայն խումբը՝ ուսուցիչ Դ. Ղազարեանցի առաջնորդութեամբ։

Աւագ-ուսուցիչ Վ. Աֆրիկեան օրվայ պատշաճի ճառ խօսեց, կենսագրական տեղեկութիւններ տալով հանգուցեալի անձնական արժանիքների և գրական-հասարակական ասպարէզում ծառայելու վերաբերմամբ։ Վերջում ճառախօսը աւելացրեց, որ Սեր. Արամխանեան նիւթական նեղ դրութեան պատճառով թողնում է գրական գործունէութիւնը և մանում ուսուցչութեան ասպարէզ, ուստի նա յաճախ մեծ կարօտութեան մէջ լինելով նոյնիսկ պատառոտած շորերով էր անցնում իր օրերը և չոր հացի կարօտ մնում...

Զարմանալի է իսկապէս, երբ Աւետիք Արամխանեանի պէս գրական դէմքեր կամ հասարակական անձնոյ գործողներ իրանց կեանքը անց են կացնում չքաւորութեան մէջ և կարօտ են մնում օրվայ ապրուստի. ապա այդ բանը ամօթ չէ բերում մեր հասարակութեանը, որին այդպիսի անհատներ նուիրում են իրանց գրական հրապարակախօսական ոյժերը և ծաղիկ հասակը ու վերջում ազգաբնակութեան ճիրաններում տարիներ մաշելով՝ անյայտութեան մէջ ապրում են և մեռնում...

Ցիրաւի, որքան զարմանալի է, նոյնքան և ամօթալի...

Ռոսորդ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 8 դեկտեմբերի

Նախագահում է Բօբնինկօն, որ յայտնում է, թէ Դումայի անենապատակ հեռագրի պատասխան ստացվեց հետևեալ հեռագիրը։ Բոլորեքեան կանգնում են։ Նախագահը կարդում է.

«Պետական Դումայի Նախագահին։ Հաղորդեցէք Պետական Դումայի անդամներին իմ շնորհակալութիւնը շնորհաւորանքի համար։ ՆԻԿՕԼԱՅ»։

Երկարատև «ուրա»-ները դղրդեցնում են դահլիճը։

Մինիստրների օթեակումն է կոչվում։

Շարունակվում են վիճաբանութիւնները դեկլարացիայի մասին։

Մարկով 2-րդ ընդգծում է, որ մինիստրների խորհրդի նախագահի ճառը հնչում էր խաղաղասիրութեամբ և յիշեցրեց Սվեատոպոլկ-Միրսկիի զարունը և կոմս Լոռիս-Մելիքովի գրուածքները. բայց յայտնի է պատմութիւնից, թէ ինչ հետևեց այդ ամենից։ Խօսելով այն մասին, թէ Ռուսաստանը քաւականին ընդարձակ է բոլոր ազգութիւնների համար, ըստ երևոյթին նաև հրէաների համար, մինիստրների խորհրդի նախագահը ցոյց տուեց դրանով, որ չէ ճանաչում Ռուսաստանը ոչ միայն իրապէս, այլ և տեսականապէս, որովհետև Ռուսաստանում հողային առատութիւն չը կայ։ Իսկ այն յայտարարութիւնը, թէ կառավարութիւնը հաւասարապէս բարեացակամօրէն է վերաբերվելու ինչպէս ռուս—տեր—ժողովրդին, այնպէս և եկեղ.-ժողովուրդներին, կառավարութեան ներկայացուցչի բերանում հնչում է ասես ժխտումն իր պետական պարտականութեան, իբրև ժխտումն ռուս ժողովրդի պատմական իրաւունքների։ Այլակրոնները նոյնպէս ձգտում են ապահովել անձի իրաւունքները, սակայն խաղաղ աշխատաւոր բնակչի անձը։ Նրանք ողջունում են նոր ոստիկանական կանոնադրութիւնը, բայց կը ցանկանային վերաքննված տեսնել նաև քրէական կանոնադրքերը աւելացնելով պատիժները, որովհետև մեր քրէական դատարանները անբարոյականացրին ժողովուրդը, առանձնապէս ինտելիգենցիային։ Խուլիգանական տիպի մի շարք յանցանքների համար անհրաժեշտ է մտցնել մարմնական պատիժ, որ արդէն արել են Եւրոպայի խելացի օրէնսդրութիւնները։ Գիւղատնտեսութեան շրջանում կառավարութեան միջոցները շատ պակասաւոր են։ Պետական պաշտպանութիւնը պէտք է կատարելագործութեան հասցնել։ Կառավարութիւնը չը պէտք է պաշտպանէ ժող. ազատութեան կուսակցութեան։ Աշակողմեանները ողջունում են 1908 թ. օգոստոսի 6-ի մանիֆէստը, որով Դուման հիմնվում է ժողովրդին իր ինքնակալի հետ կապելու համար և այդ մանիֆէստը համարում են Թագաւոր Կայսրի մեծագոյն ծառայութիւնը։

Աշակողմեանները խորապէս—ժողովրդական կուսակցութիւն են և պաշտպան են ինքնակալութեան, հաւատացած լինելով որ թագաւորական ինքնակալութիւնը ռուս ժողովրդի համար մեծագոյն պատմական բարիքն է։ Ամբողջ ռուս ժողովուրդը անխախտ կերպով կողմնակից է թագաւորական ինքնակալութեան, իսկ եթէ ինտելիգենցիան կը համարձակվի ասել, որ ինքնակալութիւնը անցեալի բաժին է ընկել, այն ժամանակ ժողովուրդը ոտքի կը կանգնի, և ամենքը կը տեսնեն, թէ ինչ կը նշանակէ աշակողմեան յեղափոխութիւնը։

Սավէնկօն տեսնում է կառավարութեան դեկլարացիայում միայն հաւաքածու տարփակ փրազների, բայց ոչինչ չէ տեսնում նրա գործերի մէջ։ Քաղաքականութիւնը օրէ-ցոր տանում է այն բանին, որ ներկայ կառավարութիւնը ժամանակ է խլում Ռուսաստանից յեղափոխութեան համար, որը ժամանակ չէ կորցնում։ Ճառախօսը չէ տեսնում նպատակ մի ժամանակ խոստացված քաղաքականութեան յաջորդականութիւնը։ Մանաւանդ այդ բանը նկատելի է Ֆինլանդիայի վերաբերմամբ։ Ռուսական ազգային քաղաքականութեան նշանաբանը կորաւ Սուզդալցիի մասվամբ։ Մինիստրների խորհրդի նախագահը նրա մասին ոչինչ չասաց իր դեկլարացիայում։ Մակլակովը ձգտում է, թէ դժգոհ է մինիստրների խորհրդի նախագահի ճառից։ Այնուհետև ճառախօսը մանրամասնօրէն պարզում է ռուսական ազգայնական ֆրակցիայի ծրագիրը և մատնանշում, որ ազգայնականները կռիւ չեն մղում այլազգիների դէմ, այլ պաշտպանվում են. ռուսական պետականութիւնը ընդունող ազնիւ այլազգու և բուն ռուսների մէջն նրանք ոչ մի զանազանութիւն չեն դնում։ Ռուսական ազգայնութիւնը հարկաւոր է, որպէսզի ձուլէ զանազան ազգութիւնները և դարձնէ մի պետութիւն։ Ոչ-ազգայնական պետութեան ակզբունքը զեկավարում էր բիւրոկրատական Ռուսաստանին մինչև 1905 թիւը, երբ հասարակական ինքնագործունէութեան ծընունդով ստեղծվեց նաև ռուսական ազգային կուսակցութիւնը։ Նա հաղիւ էր մնացել որ հասցնէր մեր պետութիւնը փլուզացիայի։ Եթէ բոլոր ազգայնութիւնները զետեղենք պետական նաւի ձախ մասում, նա շուռ կը գայ, ուստի աջ մասում հաւասարակշռութեան համար պէտք է զետեղել ռուսական ազգայնութիւնը։ Ճառախօսը նոյնպէս բացատրում է ազգային կուսակցութեան յետադիմական լինելը։ Նրանք առաջադիմականներ են՝ այդ խօսքի առողջ իմաստով։ Նրանք հանձված կղմնակից են ժողովրդական ներկայացուցչութեան և նրանք կը հսկեն նրան ու կը պահանջեն, բայց յետ չեն ընկնի կօսմօպոլիտիզմի ժամանակաշրջանում, այլ կը ելնեն, որովհետև այժմ ազգայնութեան դարն է, այլ ոչ կօսմօպոլիտիզմի (ծափահարութիւններ)։

Կիրենսկին կարծում է, որ արդի դրութեան դժբաղդութիւնը ոչ թէ նրանումն է, որ կառավարութիւնը այսպէս կամ այնպէս ըմբռնում է ազատութիւնը և կռիւ է մղում նրա դէմ, այլ նրանում, որ կառավարութիւնը չունենալով ոչ մի յենարան երկրի մէջ՝ իր իւրացրած կառավարական եղանակը պահպանելու համար հարկադրված է կռիւ մղել նոյնիսկ ոչ թէ իրաւունքի, այլ կուլտուրայի դէմ։ Ժողովրդական ներկայացուցչութեան գլխաւոր նպատակը պէտք է լինի, առանց կանգ առնելու անձնական տառապանքների և անձնազոհութիւնների առջև, փրկել հայրենիքը այդ քայքայումից։ Ճառախօսը առարկում է կառավարութեան հողային շինարարութեան վերաբերեալ բռնած քաղաքականութեան դէմ, համարելով որ նա այդպիսով ցանկութիւն ունի սղոցել գիւղացիական մասսան յօդուտ մի խումբ խոշոր և մեծատոհմ սեփականատէրերի։ Ռուսական կեանքի այդ հիմնական հարցում կառավարութեան և երրորդ Դումայի ընտրած ուղին ապացուցանում է, որ երկրի ամենաանհրաժեշտագոյն պահանջն է օրէնսդրութիւն նոր սխեմային շուտափոյթ կերպով անցնելը և ժողովրդական ներկայացուցչութիւն հրաւիրելը ընդհանուր, ուղղակի, գաղտնի և հաւասար ձայնատուութեան հիման վրա։ Դեմոկրատութիւնից դուրս փրկութիւն չը կայ Ռուսաստանի համար, առանց ժողովրդի չէ կարելի կառավարել երկիրը։ Վերջում ճառախօսը ասում է. «Մենք, աշխատաւորական խմբակը, որպէս ներկայացուցիչներ երկրի բոլոր աշխատաւոր տարրի, յայտնում ենք, որ Եւրոպայի բոլոր դեմոկրատիայի հետ միասին բողոքում ենք այն փորձերի դէմ, որոնցով ուզում են Ռուսաստանի աշխատաւոր մասսան խառնել արտաքին բարդութիւններին։ Մենք յայտնում ենք, որ երկրի և աշխատաւոր մասսաների շահերը չեն թոյլատրում այդ անելու։ արտաքին քաղաքականութեան ոչ մի տեսակ նկատումներով չէ կարելի մեզ համոզել, որ անհրաժեշտ է այն պատերազմը, որտեղ թափվելու է այդ մասսաների արիւնը։ Մենք շեշտում ենք, որ միայն դեմոկրատական կառավարութիւնը կարող էր խաղաղ միջազգային հարցերին խաղաղ լուծումն տալ։ Դրանումն է մեր ձգտումը, մեր նպատակը» (ծափահարութիւններ ձայրայեղ ձախակողմեանների նստարանների վրա)։

Կարդացվում է 40 ըդ յօդուածի հիման վրա մինիստրների խորհրդի նախագահին հարցապնդում անելու մասին, թէ ի՞նչ դրութեան մէջ են գտնվում Կովկասում զեմստվային ինքնավարութիւն մտցնելու, զինուորական-ժողովրդական վարչութիւնը վերացնելու, գաւառական, գաւառամասերի և գիւղական վարչութիւնների, գիւղական դատարանների, ընդհանուր դատական հիմնարկութիւնները Կովկասում տարածելու և ընտրական հաշտարար դատարանների վերաբերեալ բարենորոգութիւնների հարցերի մշակութիւնը։

Զիսէիձէն յիշեցնում է, որ այդ տեսակ հարցերը շատ են արվել վերջին հինգ տարիներս, բայց մինիստրական պատասխան կառավարութիւնը նրանց չէ տուել։

Դումայի մեծամասնութեամբ՝ 154 ձայնով ընդդէմ 150-ի՝ ցանկութիւն է յայտնում անյապաղ քննել այդ հարցը ըստ էութեան, ապա ճնշող մեծամասնութեամբ ընդունում է նրան առանց վիճաբանութեան։

Շինզարեովը մատնանիշ է անում, որ դեռ 1904 թ. Բարձրագոյն ուկազով հրամայված էր կառավարութեանը մշակել տեղական ինքնավարութեան հարցերը։ Երկրորդ Դումայի առջև կառավարութիւնը իր դեկլարացիայում յայտնեց, որ համապատասխան օրինագծերը մշակված են արդէն, այդ դեկլարացիայում երրորդ Դումայի առջև անհրաժեշտ էր հասարակ նրանց մշակումը, այնու ամենայնիւ մինչև այժմ այդ օրինագծերը չը կան։ Այժմ կառավարութիւնը յայտնում է, որ նրանց պատրաստելը երկար ժամանակ կը տևի։ Այդպիսի անգործունէութիւն աններելի է այսչափ կարևոր հարցում, երբ սկսվել է զեմստվոների բարոյական և ֆիզիկական այլասերումը։ Իբրև նշան այս վերջինի՝ ճառախօսը մատնանշում է զեմստվոներից մէկի որոշումը՝ միջնորդելու մարմնական պատիժը վերականգնելու մասին։ Եթէ յեղափոխութիւնը, որի մեղադրման մասին շեշտում էին աջակողմից, իսկապէս որ գայ, այդ դէպքում առաջին յանցաւորները նրա գալստեան համար պէտք է համարել նրանց, որոնք կոչ էին անում ժողովրդին վայրենութեան դիմելու։ Դիմելով ազգայնականներին, որոնք յայտարարեցին, թէ իրանք խորութիւն չեն դնում լոյալ այլազգիների և բուն ռուսների միջև, Շինզարեովը յիշեցնում է ազգայնականների վերաբերմունքը տարբեր դպրոցներում լեզուները դասաւանդելու հարցի քննարկութեան ժամանակ։ Մեծ մեղք վերցրեց իր հոգուվրա Ստոլիպինը պատուաստելով մեզանում կենդանաբանական ազգայնութիւն, որը թունաւորում է ռուսական կեանքը։ Ճառախօսը բերում է մի շարք օրինակներ, որտեղ գտնում է հակասութիւն կառավարութեան դեկլարացիայի և գործունէութեան միջև. դեկլարացիայում շեշտվում է զեմստվոյի կարևորութեան վրա ժողովրդական կեանքում, այն ինչ զեմստվային գործիչներին գաւառներում արհամարհում են իբրև մանկիկների։ դեկլարացիան ասում է զեմստվոներին միջոցներ հայթայթելու անհրաժեշտութեան մասին, իսկ ֆինանսների մինիստրը օգնականը համոզում է Պետական Խորհրդին զեմստվոներին միջոցներ չը հայթայթել, որովհետև դա կը նշանակէ ժեստ անել դէպի ձախ։ Դեկլարացիան խոստանում է մշակել մասնակարողական կանոնադրութիւնը, որն այնքան կարևոր է մեզանում, ուր ամեն տարի սովը կոշմարի նման կախված է ռուս ժողովրդի գլխին, իսկ ներքին գործերի մինիստրը վերջ է տալիս սովատանջ ազգաբնակութեանը նպաստամատոյց հասարակական կազմակերպութիւններին գործունէութեանը։ Ճառախօսը գալիս է այն եզրակացութեան, որ մոգնում չը կայ տնտեսական զարգացում ժողովրդական կեանքի հետ կապ ունեցող արդիւնաբերական ճիւղերի մէջ, այլ նկատվում է միայն արուեստական զարգացումն այն ճիւղերի մէջ, որոնք անմիջական կերպով կապված են երկաթուղային շինարարութիւնների հետ։ կենսարար ոգին թռել է կառավարութիւնից, որովհետև այնտեղ չը կան ժողովրդական կարիքներ, մնացել է միայն բիւրոկրատական սեռքեան, միայն անիւներ ու զսպանակներ։ Չը կայ կենդանի գործ։ Շինզարեովի ճառը ընդհանրապէս էր բազմաթիւ ծափահարութիւններով ձախակողմից։

*) Родовспоможеніе въ Россіи. Сборникъ докладовъ на IX Пирог. съѣздѣ проф. Рейнъ 1906 г.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ Կովկասի փոխարքայի հրատարակած հասարակական հանգստութեան մասին պարտադիր կանոնները խախտելու համար, որ արտայայտվեց ստայօդ լուրեր տարածելով, որոնք գրգռեցին ազգաբնակութեանը, Հուսէյին Ասմէդ Ալիէվը ենթարկվում է 500 ռուբլի տուգանքի կամ 3 ամսով բանտարկութեան։

— Դեկտեմբերի 5-ին Պետերբուրգում կայացաւ ֆինանսական յանձնաժողովի նիստը քննելու համար Կովկասում ճորտութեան մնացորդները վերացնելու օրինագիծը, Կովկասի ազգաբնակութեան ներկայացուցիչ իշխ. Երիսթով մատնացոյց արեց, որ շափազանց անմշակ է նախագիծը և առաջարկում էր սերժել այդ, առանց յոդուած առ յօդուած քննելու։ Դրա դէմ առարկում էր Կովկասի փոխարքայի ներկայացուցիչ Գ. Ա. Նիկոլայկի, որը չը հերքելով օրբսագծի պակասութիւնները, հնարաւոր էր համարում ուղղել նրան։ Այդ ուղղումները մշակելու համար ընտրվեց առանձին ենթայանձնաժողով, որի մէջ մտան Ա. Ա. Կովալևսկի, Ա. Ս. Սաբլինակի, Գ. Ա. Սարուխով և այլն։ («Բ»)

— Հ. Առաքելեան ներկայումս գտնվում է աբրատահանում։ Նա կը գրի թղթակցութիւններ Պարիզից, որտեղ պէտք է մնայ 7—10 օր։

— Բաքուից վերադարձան քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, ձայնաւորներ Գոտուա և իշխան Թումանեան, որոնք մեկնել էին Թիֆլիսի պոլիտեխնիկումի գործի առիթով։

— Մեզ հաղորդում են, որ առաջիկայ յունվար ամսին Թիֆլիսում կը կարդացվեն յատուկ դասախօսութիւններ վնասակար միջատների դէմ մաքառելու մասին։ Դասախօսութիւնները կը կարդացվեն Բուսաբանական այգում գիւղատնտեսական հրահանգիչների և առհասարակ ցանկացողների համար։ Դասախօսութիւնները կը սկսվեն յունվարի 10-ին և կը շարունակվեն մի ամբողջ շաբաթ։

— Դեկտ. 9-ին Պետերբուրգում տօնվեց «Լ. և Է. Մէտցլ և Ընկ.» յայտարարութիւնների առևտրական տան կենտրոնական գրասենեակի տէր Գ. Մ. Էպշտէյնի գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։ «Մէտցլ և Ընկ.» յայտարարութիւնների առևտրական տունը յայտնի է ամբողջ Ռուսաստանում։ Նրա Պետերբուրգի բաժանմունքը բացվել է Գ. Մ. Էպշտէյնի նախաձեռնութեամբ։ Շատ սիրելով լրագրական յայտարարութիւնների գործը, Էպշտէյնը անձամբ շրջեց Ռուսաստանի գաւառական քաղաքները և ծայրերկիրները և պայմանագրեր կապեց խմբագրութիւնների հետ, որով և նպաստեց առևտրի և օտարազգի մասուլի նիւթական բարգաւաճմանը։ Յոբելեանի օրը Գ. Մ. ստացել է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ զանազան պարբերական հրատարակութիւններից։ Նրա անունով մի քանի թոշակաւորների տեղ է յատկացված Ռուսաստանի մի քանի կրթական հաստատութիւններում։ Կովկասի համարեա բոլոր գլխաւոր քաղաքների բոլոր լեզուներով հրատարակվող յայտնի պարբերական հրատարակութիւնները պայմանագրերով կապված են «Մէտցլ և Ընկ.» առևտրական տան հետ։

— Երէկ Թիֆլիսում հոգին յանձնվեց մատաղահաս երիտասարդ Խրիստիկ Եսպիբարեանի մարմինը։ Հանգուցեալը լաւ ապագայ էր խոստանում։ Նա զարգացած մի երիտասարդ էր, որը ձգտում էր անընդհատ կատարելագործութեան։ Իր ընկերների շրջանում նա վայելում էր մեծ յարգանք։ Հանգուցեալը ունէր գործունէութեան համակրելի ծրագիրներ։

— Իրեցնում ենք, որ այսօր, ուրբաթ, դեկտեմբերի 14-ին, տեղի կունենայ Գրականագեղագիտական Սալոնի երեկոյթը նուիրված Գրիգոր Արծրունու յիշատակին, նրա մահվան 20-ամեայ տարեդարձի առիթով։ Մանրամասնութիւնները յայտարարված են յայտարարութիւնների բաժնում։

— Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպել, որ նոյեմբերի 27-ին Ընկերութեան օգտին կայացած ներկայացումից ստացվել է մուտք 2453 ր. 20 կ., իսկ ելք՝ 790 ր. 50 կ.։ Զուտ արդիւնք է մնացել 1662 ր. 70 կոպէկ։

— Ինչպէս լսում ենք, դեկտեմբերի 22-ին յօգուտ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան տեղի է ունենալու Ընկերութեան սովորական երեկոյթը։ Այս անգամ երեկոյթը կրում է «Կանանց ծովի յատակում» վերնագիրը։ Այդ երեկոյթի համար այժմեանից մեծ պատրաստութիւններ են տեսնվում։ Դաշիճը ներկայացնելու է ծովի յատակը իր հրաշալիքներով։

— Ռուսաց Կայսերական Թատրոնական Ընկերութիւնը իր ներկայացուցիչ պ. Բէժանբէգի միջոցով նախագծել է բանալ բաժանմունք նաև Թիֆլիսում։ Այդ նպատակով դեկտեմբերի 17-ին Արքունական Թատրոնում կը տրվի «գալա» ներկայացում բազմակողմանի ծրագրով։ Ընդհանուր հասոյթի մի մասը յատկացվելու է զառամեալ բեմական գործիչներին ապաստան տալու գործին։ Համակրելի նպատակը անշուշտ կը դրդէ բոլոր նախանձախնդիրներին լցնել յիշեալ օրը Արքունական Թատրոնը։ Տոմսակները արդէն վաճառվում են։ Ներկայացման օրը Թատրոնում բացի ծրագիրներից ոչինչ բարեգործական վաճառք չէ լինելու։

— Մ. Մախարաձէն խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետին թոյլ տալու հրատարակել Թիֆլիսում մի թատրոնական օրաթերթ ռուսերէն, հայերէն և վրացերէն՝ «Թատրոն» անունով։

— Շուտով Թիֆլիս է գալու պրոֆ. Ն. Գրէդէսկուլը, որ կարդալու է երկու դասախօսութիւն. 1) Ազգային հարցը Արևմուտքում և Ռուսաստանում և 2) Ինտելիգենցիայի դերը հասարակական կեանքում։

— Թիֆլիսի ոստիկանապետը դարձեալ կարգադրել է 5 րդ քաղաքամասի պրիստաւին շարունակ հսկել հանքային բաղնիքների քիսաչիների առողջութեան վրա։

— Բագումի մի քանի դաստրօլներ է տալու յայտնի երգչուհի Վան-Բրանդը։

— Բագուի քաղաքապետը նախագծուշացնում է քաղաքագլխի պաշտօնակատար Յարութիւնեանին, որ եթէ ներկայ դեկտ. 28-ին վերջնական լուծումն չը ստանայ Բագուի քաղաքագլխի ընտրութեան հարցը, նա ստիպված վարվելու է օրէնքի իմաստով։

— Վրիպակ.—«Մշակի» № 276-ում լոյս տեսած «Արդարութիւնը ուրացել են, գազափարը սպանել» խորագրով յօդուածում մի սխալ է սպրդել։ Թերթի երրորդ երեսի առաջին սիւնակի երկրորդ տողում լոյս տեսած «պակներին» բառը պիտի լինի՝ «հիմնական դրամագլխի տոկոսներից»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 8 դեկտեմբերի

«Մշակում» կարդացի մի ակնարկ հանգուցեալ ամուսնուս թաղման մասին, թէ ինչպէս անշուք անցաւ, և ինչպէս, չը նայելով որ հանգուցեալը երկար տարիներ ուսուցիչ էր, Ներսիսեան դպրոցում, նոյն հաստատութեան հոգաբարձութեան կողմից անհոգ էր թողնված և այլն և այլն։

Ձեր իրաւացի ակնարկի վրա ես կաւելացնեմ Ներսիսեան ուսումնարանի հոգաբարձութեան տգեղ վարմունքը, որ ամեն մի հայի մարդու կը զայրացնի։

Երբ նոյեմբերի 26 ին ամուսինս վախճանվեց, ես իսկոյն նամակով յայտնեցի Ներսիսեան դպրոցի պ. տեսչին և հոգաբարձութեանը, ոչ մի օգնութիւն չը խնդրելով նրանցից։ Թաղման օրը առաւօտեան երբ ես ուղևորվում էի դէպի եկեղեցի, քարտուղարի ձեռքով հոգաբարձութիւնը ինձ ուղարկում է 50 ր., որը ինձ վերին աստիճանի զայրացրեց, և ես անպատասխան համարելով իմ ամուսնուս յիշատակը՝ ետ դարձրի հոգաբարձութեանը իբրև նուէր իմ կողմից յօգուտ այն 100,000 ր. դէֆիցիտի, որ եղել է ներկայ հոգաբարձուների ժամանակ։ Ես չեմ հասկանում, թէ ի՛նչ էին կամենում ինձ յայտնել. նի թական օգնութեան հարց չէր կարող լինել, քանի որ հարիւրներ ծախվեցին թաղման վրա, իսկ ամուսնուս հիւանդ պառկած ժամանակ, որը շարունակ տարիներ տեսեց, ի հարկէ աւելի շատ։ Դպրոցի վարչութիւնը եթէ յարգանքի զգացումից դրդված էր ուզարկել յիշեալ գումարը, ապա դա ինձ համար միանգամայն անհասկանալի էր մնում։

Մի ուսուցիչ, որ 24 տարի Ներսիսեան դպրոցի մէջ անխոնջ աշխատել է և 10 տարի էլ ուրիշ հայոց ուսումնարաններում թէ տեսչի և թէ ուսուցչի պաշտօն է վարել և ոչ մի վնաս չէ պատճառել այդ հիմնարկութիւններին—հակառակ դէպքում չէին թողնի 34 տարի ծառայել— ամենայն իրաւունք ունէր պահանջելու, որ յիշեալ հիմնարկութեան վարչութիւնն աւելի ուշադիր լինի դէպի իր արդար պահանջները։ Սակայն եթէ իմ հանգուցեալ ամուսինը իր կենդանութեան ժամանակ յիշեալ հիմնարկութեան վարչութեան՝ հարկ եղած ուշադրութիւնը չը գրաւեց, դրա պատճառը աւելի ուղղութիւնների ու կուսակցական հայեացքների տարբերութեան մէջ պիտի որոնել։ Հէնց այդ հողի վրա էլ առաջարկվեց ամուսնուս՝ իբրև «յոգնած ուսուցչի» տալ հրաժարական, խոստանալով նրան առաջին կարգի թոշակ։ Այլապէս՝ այն ժամանակի հոգաբարձութիւնը իրաւունք չունէր հրաժարեցնել, քանի որ մի տարի էր մնում՝ ամուսնուս պաշտօնավարութեան 25-ամեակը լրանալու, երբ թոշակարկղը կէ սկսի գործել։ Նա հաւատաց այս ժամանակվայ հոգաբարձութիւնը և հրաժարական տուեց։ Եւ այդ «յոգնած ուսուցիչը» պաշտօն ստանձնեց Ալէքսանդրօպոլի գիմնազիայում, որտեղ երկու տարի ծառայելուց յետոյ սեսեա ում վարը ընկաւ և ոտքը վնասեց, որի պատճառով և տարիներ անկողնում էր պառկած։

Երբ Ներսիսեան դպրոցի թոշակարկղը սկսեց գործել, հոգաբարձութիւնը ամուսնուս թոշակը երկրորդ կարգի նշանակեց՝ դրժելով իր տուած նախկին խոստումը և մինչև անգամ արհամարհելով հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսի կօնդակը, որով պատուիրված էր հաշուել ամուսնուս ուսուցչական ծառայութեան ընդհանուր տարիները և՛ ուրիշ հայ դպրոցներում։

Ամուսինս սկզբում իր հիւանդութեան ժամանակ ստացաւ 200 ր. օժանդակութիւն կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուից՝ գիմնազիայում երկու տարի ծառայելուց յետոյ՝ իբրև հիւանդ ուսուցիչ։ Իսկ մեր հայոց ուսումնարանի վարչութիւնը, փոխանակ օգնելու, թոշակը կիսեց և, բացի դրանից, թողեց, որ իր վաղեմի ուսուցչի ու երախտաւորի յիշատակն ու թաղումը մնան այնքան անշուք ու անփառունակ։

Ինձ գուցէ առարկեն, թէ յարգանքը կամքի բան է և ամեն մարդ իր արժանաւորութեան համեմատ է յարգվում։ Այո, ես համաձայն եմ. այդ հարցը վէճի բան է։ Բայց հոգաբարձութիւնը պէտք է ունենար հաշիւ ոչ թէ Լևոն Թիւսիկեանի անձի ու գաղափարների հետ, այլ յանձին նրա՝ իբրև երկար տարիներ սերունդներ կրթող ուսուցչի հետ։ Այստեղ պէտք է խաղաք գլխաւոր դերը այդպիսի ուսուցչի յիշատակը։ Այրի Եղիսաբէթ Թիւսիկեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Վերադառնալով Բալկաններից Պետերբուրգ, Գուչկովը յայտնել է թէ նրա կարծիքով՝ պատերազմը պէտք է շարունակվի։

— Մոսկվայում, բժ. Խանդամիրեանի գործը, որով մեղադրվում է նահարուստ Տէր-Գէորգեանի որդուն սպանելուն մէջ, քննվելու է մարտի 27-ին։

— Գրօզնայում ժամ. զինուորական դատարանը ձեռնարկեց քննելու Զէլիմ-խանի յարձակման գործը ինժենէրների ժանաչոդովի վրա։

— Պետերբուրգում պահնորդական բաժանմունքի պաշտօնեաները ձերբակալեցին 7 գիմնազիաների աշակերտներին, որոնք ժողովվել էին հակակառավարական նպատակով խորհրդակցելու։

— Ֆինլանդական հաստատութիւններում վճռված է գործավարութիւնը վարել ռուսերէն։ Առաջարկված է ֆին պաշտօնեաներ ուղարկել Պետերբուրգ ռուսերէն սովորելու համար։

— Լօնդոնի կօնֆերէնցիան մի շաբաթով ընդլատեց իր պարապմունքները։ Կրետէի և միւս կղզիների հարցը լուծվելու է յօգուտ Յունաստանի։

— Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և վերջում Աւստրիան խորհուրդ տուին Բ. Դրանը լինել աւելի զիջող։

— Բրիւսէլում հակառուսական շարժումը բանտորների մէջ շարունակվում է։ Ասում են, որ դրամը տալիս է մեծ պետութիւններից մինը։ Միանման մի-տինգներ սկսվել են Հիւսիսային Ֆրանսիայում։

— Գերմանիան և Աւստրիան ցնծում են, որ կարողացան Լօնդոնի դեսպանների վեհաժողովում ընդունել տալ վայրենի Ալբանիային աւտօնոմիա տալու իրանց առաջարկը։ Դրա հակառակ ռուսական և սլաւօնական զեկավար շրջանները ընկճված են։ Սերբիան ճարահատեալ ընդունեց կօնֆերէնցիայի որոշումը։ Սակայն Միրիդիտ և Մալիսոր յայտնի գեղերը վճռել են Սկիւտարը չը տալ Ալբանիայի մայրաքաղաքի համար։

— Պուանկարէն առաջարկվեց թեկնածու Ֆրանսիական հանրապետութեան նախագահի պաշտօնի համար։

— Պէկինում արդէն խօսում են, որ ռուսաց դեսպանը յետ է կանչվում և որ չին-ռուսական պատերազմը անխուսափելի է դառնում։ Իւանշիկայը պատուիրեց գաւառական իշխանութիւններին ամեն կերպ խաղաղեցնել յուզված մարդերը։

— Վիէննայից հեռագրում են, որ Գալիցիայի զանազան տեղերում բռնկվել են հակալեհական և հակահրէական անկարգութիւններ։

— Պետերբուրգի ամբողջ մամուլը Լօնդոնի կօնֆերէնցիայում ալբանական աւտօնոմիան ընդունելը հաստատում է Աւստրիայի յաղթութիւն և Ռուսաստանի դիպլոմատիական պարտութիւն։

— Բոլոր աւստրիական սանիտարական խմբերը Բալկաններից կանչվեցին Աւստրիա։

— Վիէննայից ամեն տեսակ սենսացիոն ու պրովոկացիոն լուրեր են բղխում, որ իբր թէ Յէտինիէում երևան է հանված դաւադրութիւն ներկայ դինաստիայի դէմ, իբր թէ Բոլգարիան գաղտնի բանակցութիւն է վարում Թիւրքիայի հետ Աւստրիայի հովանաւորութեամբ և այլն։

— Բ. Դուռը ճեպընթաց հեռագիրներ ստացաւ Ադրիանուպոլսից և Սկիւտարից, թէ պաշարը վերջանալու մօտ է և միայն այդ հանգամանքը կը դրդէ Թիւրքերին անձնատուր լինել։ Աստիճապէս Բ. Դուռը հեռագրով պատուիրեց իր լիազօրներին կօնֆերէնցիայում առաջին հարցը դնել պաշարված տեղերին մթերքներ հասցնելու անհրաժեշտութիւնը։ Իսկ եթէ այդ չընդունվի, իսկոյն բանակցութիւնները խզել, որից յետոյ պատերազմը կը յայտարարվի վերսկված։

— Մոսկվայից հեռագրում են, որ ներքին գործերի մինիստր Մակարովը նախագծել է փակել կաթոլիկների և մահմեդականների մի շարք լուսաւորական ընկերութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

12 դեկտեմբերի

ՐԻԳԱ։ Քաղաքային վարչութիւնը նախագծում է Օսմանովների Տան յօբելեանի յաւերժացման առիթով բանալ սանատօրիա Թոքախտաւորների համար, յատկացնելով 300,000 ռուբլի։

ՏՈՄՍԿ։ Պետերբուրգ մեկնեց Մոսկվայի միտրոպոլիտ Մակարիը։

ՆԻԿՕԼԱՅԵՎ։ Եկաւ ծովային մինիստրը։

ՄՈՍԿՎԱ։ Նահանգական զէմստվային վարչութիւնների նախագահների խորհրդակցութեան մէջ Օսմանովների Տան յօբելեանի առիթով ցանկութիւն յայտնվեց մատուցանել համառուսական ամենահաւատարիմ ուղերձ ազնուականութիւնների, զէմստվոների, քաղաքների և բոլոր դասակարգերի կողմից։

ՆՈՎՈՉԵՐԿԱՍԿ։ Խուզարկու շուն Տրէֆի շնորհիւ գտնվեց Գորօժանովների առևտրական տան դրամատարից 70,000 ր. յափշտակող յանցաւորների հետքը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՑՑՆՈՒՄ Է

— Բորիսով, Ալէքսանդր Յովհաննիսեանին.—Ձեր յօդուածը «Մշակում» լոյս չի տեսնիլ։ Սահակ Մուրադեանին.—Խմբագրութեան մէջ ստացվել է երեք նամակ—մէկը Շամախուց, իսկ երկուսը՝ Բագուից—ձեզ յանձնելու համար։ Յայտնեցէք մեզ ձեր մանրամասն հասցէն, որպէսզի այդ նամակները ուղարկենք ձեզ։

Գրիգոր Սերգ. Միրզոյեանին.—Ուղարկեցէք մեզ ձեր մանրամասն հասցէն, որպէսզի ձեզ յանձնելու համար Մերվից ուղարկված երկու նամակը, որոնք ահա քանի ամիս է ինչ մնում են մեզ մօտ, ուղարկենք ձեզ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Открыта подписка на 1913 г.
на еженедѣ. популярно-медицинскій органъ
„ЖУРНАЛЪ-ЛЕЧЕБНИКЪ“
Журналъ посвященъ цѣлямъ самолеченія и какъ лечебникъ въ немъ будутъ указаны самые радикальные способы леченія всѣхъ болѣзней.
Редакція представляетъ БЕЗПЛАТНО своимъ подписчикамъ медицинскіе совѣты, указываетъ желающимъ спеціальныя лечебницы, курорты, санаторіи и т. д.
Подписчикамъ будетъ выслана въ видѣ ПРЕМІИ первый выпускъ
Большого Домашняго „ЛЕЧЕБНИКА“
который въ отдѣльной продажѣ стоитъ 1 р.
Подписка принимается въ главной конторѣ редакціи: С.-Петербургъ. Невскій пр. 53, кв. 13. Редакція „Журнала-Лечебника“.
(չ. ու.) 923. 10—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԲԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒՈՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վենտրական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱԲԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին հնեաբանական։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՌԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՈՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՈՒՄՈՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ —12—1 ժ մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ.
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌՈՒՆԴԻՆ-ԱՐԵՇԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Զ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն։
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոն սիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—114

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Յ. ԲԱԹԱՆԵԱՆ
Վերսկսեց ընդունելութիւնը ներքին և զգային հիւանդութիւններից։
Առաւօտեան ժամը 10—12-ը և երեկոյեան ժամը 6—8-ը
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 837. 25—25

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նիկ. Աբրահամեանի
հետեւեալ հրատարակութիւնները.
I
ԶԵՌՆԱՐԿ ԱՌԻԻՏՐԱԿԱՆ ՀԱՇԻՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ
երկաթ., կոլոնիալ, բակալ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 ռուբ.։
II
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинозав. производствомъ
(2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.
III
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10.000 р. (2 изд.) Ц. 85 к.
IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.
V
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.
Հեղինակի մօտ՝ Բухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская 22 և գրավաճառանոցներում։
(ու.չ.կ.) 939. 20—1

6 РУБ. ВЪ ГОДЪ | Большой литерат.-обществ. иллюстрированный журналъ | 75 К. отдѣльн. номеръ
Открыта подписка на 1913 годъ
Новая Мысль
Ежемѣсячный журналъ, выходящій при ближайшемъ участіи графа Ал. Н. Толстого, Осипа Дымова, проф. В. Н. Сперанскаго и М. Энгельгардта, большими иллюстрированными книжками и заключающій отдѣлы:
ХУДОЖ. ЛИТЕРАТУРА романы, повѣсти, разсказы и стихи оригинальные и переводные.
НАУКА популярно-научныя статьи по вопросамъ науки и философіи.
ИСКУССТВО статьи по литературѣ, живописи, театру, музыкѣ и художественныя репродукціи съ картинъ.
ОБЩЕСТВ. ЖИЗНЬ отраженіе текущей русской дѣйствительности—обществ., политическ. Провинц. обозр. иллюстр.
МІРОВОЕ ОБОЗРѢНІЕ Полный обзоръ иностранной жизни въ статьяхъ и иллюстраціяхъ.
Въ ближайшихъ книжкахъ журнала будутъ напечатаны произведенія: Д. Айзмана, Осипа Дымова, графа Ал. Н. Толстого, Георгія Чулкова, Бор. Зайцева, Н. Олигера, А. Рославлева, С. Юшкевича и друг.
Подробный списокъ сотрудниковъ печатается въ журналѣ.
ПОДПИСНАЯ ЦѢНА на годъ 6 руб. Допускается разсрочка:
при подпискѣ 3 р., къ 1 Апр. 1 р. 75 к., къ 1 Іюля 1 р. 50 к. За границу 9 р.
Пробн. номеръ—за одинадцать 7 коп. мар.:: Подробн. просп.—безплатно.
ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ ВО ВСѢХЪ КНИЖНЫХЪ МАГАЗИНАХЪ.
Адресъ редакціи: Москва, Трехпрудный пер., д. Т-ва А. А. Левенсонъ.
Редакторы: Графъ Ал. Н. Толстой и Ник. Архиповъ.
(ու.) 924. 4—1

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժեներ Ի. Ս. Պօնդոյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տելեֆոն №10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւնի, կաթսայի, բիֆլէնոյ, տանիքի՝ սև և ցինկով պատած։ ԱՍՖԱԼՏ սրգրոնեան։ ԳՈՒԴՐՕՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ։ Շինութեան և փուչ ԱԼԻՒՍ, ԿԼՄԻՆՏՐ մարսէյլեան տեսակի և այլ առարկ.։ Աղիւսի սեփական գործարան Թիֆլիսում։ Ամեն տեսակ շինարարական նիւթեղէն. համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ։
(չ.ու.կ) 617. 50—48

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный